




ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԵՐԻՆ ՄԷՋ

Հրապարակայնութեան, դուք ըսէք՝ հանրացումի, այս մեծ երկրին մէջ, զարգանալու, վերապրելու, տեղ մը հասնելու, և այժմէական մնալու՝ պայքարին դիմադրելու համար, անհրաժեշտ է առաւելագոյն չափով օգտագործել՝ ինքզինքը ծանօթացնելու և ուրիշները ճանչնալու միջոցները: Մշակել՝ հանրային յարաբերութիւն, փոքրագոյն ձեռնարկէ մը մինչև ամէնէն բարդակառոյց կազմակերպութիւններ, ըլլան անոնք՝ քաղաքական, ընկերային, կամ կրօնական՝ կը հպատակին այս օրէնքին: Անհատներն ալ կ'ենթարկուին նոյն չափանիշին:

Ամերիկահայ եկեղեցւոյ Արևելեան թեմը, իր առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկեանի նախանձաւոր վերահսկողութեամբ կը հետապնդէ հանրային յարաբերութիւններ՝ քաղաքական-տեղական, քաղաքական-կենցաղական, և քաղաքական-պետական մակերեսներու վրայ: Նիւ Եօրքի նահանգային գրասենեակներէն, Նիւ Յօրք քաղաքի քաղաքապետարանէն, կաթոլիկ ու բողոքական յարանուանութիւններէն, օրթոտոքս՝ մեծ ու փոքր եկեղեցական կեդրոններէն, հրէական ազդեցիկ շրջանակներէն, և եկեղեցական միջազգային ու տեղական խորհուրդներէն, արձակուած ամէն առիթ, չըխուսափեցաւ առաջնորդ հօր ուշադրութենէն: Անձամբ կամ իր ներկայացուցիչներով կարելի եղած է նոր կապ, նոր հանգոյց հանգրիմել, Հայ Եկեղեցւոյ ու մեր համայնքներուն ալ նոր դէմք հաղորդել:

Այդ բոլորը իրագործելու համար դիմումած է հանդիսադրական միջոցներու: Առաջնորդ սրբազան հօր նախագահութեամբ Մայր տաճարին մէջ կատարուած են կրօնական արարողութիւններ, պատուելու՝ բարձրաստիճան հոգևորական ներկայացուցիչներ մեր ու օտար եկեղեցիներէ. յիշատակելու միջազգային նշանակութիւն ունեցող դէպքեր ու դէմքեր: Առաջնորդարանի դահլիճին մէջ հիւրասիրուած են պետական և հանրային կարևոր դիրքերու վրայ՝ անձնավորութիւններ: Ս. Վարդան Մայր տաճարին ու Գաւութեան հանդիսասրահին մէջ՝ նուագային, թատերական, գրական ու պատկերացուցական ներկայացումներ, ի պատիւ և ի յիշատակ հայ ու օտար արուեստագէտներու, Ղարաբաղն ու երկրաշարժը իրենց ցաւագին մանրամասնութիւններով, խնամքին առարկան եղան Առաջնորդարանի՝ հանրային յարաբերութիւններու կերպընթացին: Բողոքներ, ցույցեր, հազարաւոր նամակներ, անձնական ու հաւաքական դիմումներ կերպարորոնեցան Ամերիկահայ Առաջնորդարանին մէջ:— Այսքանը՝ արտաքին ճակատէն:

Իսկ ներսի՝ ճակատէն: Մեր համայնքները առ հասարակ, կիսատեղեակ են, չըսելու համար անտեղեակ (թերևս հետաքրքրութեան ու հետևողականութեան պակասէն) այն աշխատանքներուն՝ որոնք կը կատարուին թեմական սա կեդրոնէն ներս: Հայ և անգլիալեզու թերթերուն մէջ՝ լրատրութիւնները կը հաղորդեն այնքան որքան

կարելի է տալ՝ գրաւոր հաղորդագրութիւններով: Կարևոր է սեփական աչքերով վկայել անոնց ետևը գոյառնող գործունէութիւններու բազմերես ցանցը, որ կը տարածուի Առաջնորդարանի բաժանմունքներու վրայ: Առաջնորդ Սրբազան Հօր բազմազբաղ գրասենեակէն մինչև հեռաւոր անկիւնները սա պատկառելի համալիրին, իրաքանչիւրը իր պարտականութեան սահմանին մէջ, ուրիշ բան չ'ըներ, բայց՝ զարգացնել հանրային յարաբերութիւնը: Անդադար հեռաձայներ, այցելութիւններ, հիւրասիրութիւններ, հանդիպումներ, ժողովներ, 40.000 հասցէներու ցանկ, թղթակցութիւններ, գրախանութ, հայ լեզուի կեդրոն, կրօնական դաստիարակութեան բաժանմունք, ևլն., լծուած են աշխատանքներու, որոնք կ'որոնեն յարաբերութիւններու լայն պաշարներ ու միջոցներ ի նպաստ հայ ժողովուրդին, անոր Եկեղեցիին ու մշակութիւն: Դիրին չէ կատարուածը: Կը պահանջէ հասկացողութիւն՝ դէպքերուն ու անոնց ներկայացուցած առիթներուն: Իսկ հայրենասիրութիւն, նուիրում, և աշխատասիրութիւն, կը կազմեն միւս բաղկացուցիչ տարրերը:

Այս խոշոր կառուցին ետին բնականաբար ի պաշտօնէ կը կանգնի Առաջնորդ սրբազան հայրը: Իր բաժինն է՝ ջանալ ու նիւթել, թեմական այցելութիւններ կատարել, նախագահել, քարոզել, ծրագրել, վիճաբանիլ, չարչարուիլ, քիչ մըն ալ ուրախանալ, և մասնակցիլ՝ միջեկեղեցական ժողովներուն: Այս բոլորին միտք բանին: Նոյն հանրային յարաբերութիւնները, այս անգամ իրարու հետ՝ իբրև նոյն պատմութեան, Եկեղեցւոյ, արիւնի, ու ակնկալութիւններու ժողովուրդ: Բաժնուած ու ցըր-

ուած մեր համայնքները այս հիւրընկալ երկրին մէջ, ունին պահանջքը աւելի մօտենալու, ճանչնալու և գնահատելու զիրար: Այդ ճանաչողութիւնը, ապահովաբար պիտի հալեցնէ մեր դժուարութիւններուն երկաթը, պիտի անհետացնէ անուն չունեցող պատուարները, և մեր ներքին յարաբերութիւնները պիտի վերագտնեն իրենց տրամաբանական ու օրինական համագարկը:

Առիթով մը, առաջնորդ սրբազանը անդրադառնալով մեր թեմին կատարած հանրային յարաբերութիւններուն, ըսաւ. «Անբաւարար է մեր ըրածը այս ուղղութեամբ. կարելի է աւելին ընել. արդեօք դրամին, մարդուն պակասը կամ այլ պատճառներ, արգելք կ'ըլլան այդ աւելին ընելու»:— Բայց մենք գոհ ենք կատարուածէ և անոր արդիւնքէն: Անցնող քսան տարիներու հեքին ընդմէջէն չենք կրնար չտեսնել այն բոլորը, զոր մեր թեմը իր համայնքներով կրցած է իրագործել հանրային յարաբերութիւններու ճամբով:

Երբեմն կը մատնանշուին վերապահումներ: Սակայն, բոլորն ալ անվերապահօրէն համաձայն են, որ Սրբազան Հայրն անցնող քսան տարիներու առաջնորդութեանը ընթացքին պատուով օգտագործեց հանրային յարաբերութեան ընծայած առաւելութիւնները, որոնք լայնօրէն ծառայեցին ճանչցնելու՝ հայ գոյութիւնը այս երկրի՝ քաղաքական ու կրօնական կարևոր կեդրոններուն: Ասիկա յաղթանակ մըն է: Երբ Ղարաբաղը բռնկեցաւ և երկրաշարժը կործանեց, գետինը պատրաստ էր—Ամերիկան գիտէր թէ ո՛վ էր հայը և ո՛ր էր Հայաստանը:

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ

